ՀԱՐՑԱՇԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 1.
Քաղաքացիական օրենսդրության ակտերը և այլ իրավական ակտերը՝

Հետադարձ ուժ չունեն ու կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

(հոդ. 5, մաս 1)

Հարց 2.
Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են՝

Դրանց գրանցման պահից:

(հոդ. 10, մաս 2)

Հարց 3.
Քաղաքացու իրավունակությունը ծագում է՝

Նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

(հոդ. 20, մաս 2)

Հարց 4.
Իրավաբանական անձի իրավունակությունը՝

Ծագում է նրա ստեղծման և դադարում է լուծարման ավարտի պահից:

(հոդ. 52, մաս 4)

Հարց 5.
Գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, աշխատանքները և ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), ոչ նյութական բարիքները՝

Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են:

(հոդ. 132)

Հարց 6.
Սուբյեկտի՝ իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքը՝

Սեփականության իրավունքն է:

(հոդ. 163, մաս 1)

Հարց 7.
Այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից, համարվում է՝

Տիրազուրկ:

(հոդ. 178, մաս 1)

Հարց 8.
Գույքային սերվիտուտը կարող է լինել՝

Կամավոր և հարկադիր:

(հոդ. 210, մաս 5)

Հարց 9.
Լիազորագիր է համարվում՝

Գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

(հոդ. 321, մաս 1)

Հարց 10.
Հայցային վաղեմության՝

Ընդհանուր ժամկետը երեք տարի է:

(հոդ. 332)

Հարց 11.
Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող՝

Բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

(հոդ. 447, մաս 1)

Հարց 12.
Պայմանագիրը կնքված է համարվում՝

Օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

(հոդ. 449, մաս 1)